ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԳԱՆԱՁՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարնականէն հետեւ տարեշրջանը 5 ֆր. կամ 2 բրլ. հատ. Քղթդրմ.

Ներքին ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսով ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով եւ 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԺԱ ՏԱՐԻ ԹԻԻ 64

1895 ՄԱՐՏ 13

1895 ՄԱՐՏ 1 (Հ. Տ.)

ԶՈՐՆԳՐՈՒԹԻՒ

Կը հրատարակուի Դշ. եւ Երք. օրեր

ԳՈՒՅՔԱՆՈՆՆԵՐ

Նամագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով եւ կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն եւ ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 մէկ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՅՕԳԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թուրքաց բնական դաշնակիցներ. — Ճշմարտութիւնը Հայաստանի մասին. — Վեհափառ Կաթողիկոսի ուղեւորութիւնը. — Նամակ Թիւրքիոյ (Զմիռն). — Հայեր ի Թիւրքիա. — Զօրապետ Տէր-Ասատուրով. — Արտասահմանի լուրեր. — Յանուցումներ։

ԹՈՒՐՔԱՑ ԲՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ

Թուրքայ բնական դաշնակիցները ըսելով, թերեւս ընթերցողը կարծէ թէ այս կամ այն տէրութեան քաղաքական յարաբերութեանց քննութեամբ պիտի զբաղինք սոյն յօդուածի մէջ և կամ վերջին օրերս Շաքիր փաշայի պատուիրակութեամբ Գերմանիոյ կայսեր ընծայ ղրկուած և Սանոյ կոտորածի արեամբը ներկուած «Գատոյ տուր»ը...։ Ո՛չ Թուրքայ բնական դաշնակիցները ըսելով, անցելոյն ու ներկայի մէջ Թուրքին կենակից անբաժան ընկերները կը հասկնանք. Ծուլութիւն, բարբարոսութիւն, աւերակ, սով և մահ։

Եւ այս անդամ սովի վրայ պիտի խօսինք։

Ահա՛ տարտ և ապրիլ ամիսները երբ գարնան դուռները կը բացուին. խեղճ Հայաստանի երկրագործ գիւղացին, իր դռնակին փակ ու անակն աւերակ՝ տկլոր, անօթի, գալկահար մանկտին հայ կուղէ. դաշտն ու արտ, նոյնպէս զաւակի չափ մօտ մշակի սրտին՝ անմշակ ու լքուած, գութան, հերկ ու սերմ կուղեն. և տանուտէր՝ որ երէկ քան լուծ եզ ու գոմէշ ունէր, այսօր ո՛չ զոյգ մ՛եզ ունի խարօրի համար, ո՛չ պաղունց մը յորին, գարի սերմի համար, ո՛չ մշակ, ո՛չ խոտաղ. ո՛չ հաւ մը իր բակին մէջ, ո՛չ աքլոր մը իր կատուին վրայ։ Այսպէս լուծիւն, սարսափ, սով ու մահ կը տիրեն երկրագործի ներսն ու դուրս. պապիկն սեւ չիւար, Թոռնիկն սովահար ու լքազատատառ. երկրի վրայ վատահութիւն չկայ, երկինքի յոյսն է հեռու, երկիրը հրաշէկ երկաթ է դարձեր, երկինք անդծելի պողպատ։

Պէտք է յիշել որ Հայաստանի ժողովրդեան հարիւրին ևօթանասունը երկրագործ է և ասոնք են որ կը կեբակրեն Սուլթանը, իր հարէմ անհամար, Զաքի փաշան և իր անբա-

նից բանակը, պղերգ ու պիղծ Թուրքը և վայրագ ու վայելատուն Քուրդն, ցորեն հաց կուտան կատղած գայլերուն, խղուղն, գարին ու կըկըլ թէ ձիան ճիւ պիժերուն, փա՛ռք կուտան Աստծուն։

Ով որ մշակ երկրագործ Հայը իր տան ու արտին մէջ տեսեր, կը ճանչէ, նա միայն կրնայ գաղափար ունենալ ու զգալ անոր հոգեկան արհաւիրք այսպիսի արհաւրալից ժամանակի մէջ գարնանային այս օրեր։

Ի՛նչ աւելի սրտաբեկ տեսարան է դիտել տանուտէր երկրագործ հատարազուկ հսկայ մը, պարզ պատկառելի նահապետական դէմքով, դէմք մը որոյ վրայ գծուած են աշխատութեան սէր, բնաւորական գութ, պատիւ-խաղաղութիւն, հիւրասիրութիւն, արդար վաստակի հպարտութիւն, անպայման հնազանդութիւն առ Թագաւորն և անսահման հաւատք առ Աստուած. այո՛, ի՛նչ աւելի ազեխարշ տեսարան կայ քան դիտել որ այդ պատկառելի և սուրբ դէմքի վրայ Թշուառութեան գծած ակօսներուն մէջ արտասուաց ցօղեր կկիզնեն աչքերն... երկրագործը կուլայ...։

Ահա աչքիս առաջ կենդանի կը տեսնեմ Տարօնոյ, Վասպուրականի, Ալաշկերտի հայ մշակը իր քարուքանդ տնակին առաջ քար կտրած, հաստաբազուկ ձեռքերը ծալած, դէպի իւր այնչափ սիրած արտն ու անդաստան կընայի անհուշտ աչքով. հո՞ն է իւր սիրտ, իւր սէր, իւր զաւակ, իւր կին, իւր խէրն ու մէր. խոփ ու վիճակի, սերմ ու մշակ կուզէ արտը որ չը մեռնի. բայց ի՞նչ ընէ, ախոռն ու մարագ ամայի աւերակ են, օգնական ձեռքեր կտրած են։ Ահա սարեկ ու ծիծեռնիկ, արտուտիկն ու չախրակմանիկ վերադարձեր գարնան երգեր կը ճըվլվան ու կը ճվլեն մեր մշակի հոգին... Եւ մշակ վերջապէս լքեալ և յուսաբեկ այս անհանդուրժելի վիճակին հանդէպ, կորոշէ Թողուլ և փախչիլ, երթալ պահ մը ազատելիք քրիստոնեայ Թագաւորի երկիրը, գոնէ իւր և ողջ մնացած ընտանիքի պատիւն ու արեան ազատելու համար. բայց այդ սահմանի վրայ քրիստոնեայ ղօրքեր գնահակառ կըլնեն անգութ օրական. ներէ վախճատական այս վիրաւոր այծեամները...։ Տէր Աստուած, հապա ո՞ւր մենք դանդխինք։ Այդ քրիս-

տոնէից պաշտպան Թագաւորութիւն մինչեւ ցարդ ի՞նչ ջնաս տեսած է Հայ ու Հայաստանէն, երկուքն ալ ձրի ժառանգութիւն ստացեր է որ իւր մեծ նահանգի կենդանութիւն և փառք կը կազմեն. և մենք բովանդակ հայութիւնը միշտ երախտագէտ մնացած ենք, առանց ցարդ իրօք երախտիք մը տեսնելու։ Իսկ Հայաստանին առանց Հայու տիրանալու մտադրութիւն մը անբացատրելի է մեզ համար...։

Չէ՛, սիրելի՛ մշակ, չէ՛, կաց դարձեալ քու այրած ու քանդած հիւղակին մէջ, քու հողին ու արտին մէջ, քու ժամուն ու պապերու գերեզմանին մօտ. դուն ես միակ մեր յոյս, ով կենդանի և անմահ նահատակ. քու անոպատ համբերութեամբ ու զոհողութեամբն է որ Հայաստան ու Հայ անուն կապրի հազարաւոր տարիներէ ի վեր. դուն մշակ երկրագործ Հայ, Տաճկահայ, Մշեցի, Վանցի, դո՛ւն ես Հայութիւն ու Հայաստան, դուն կապրիս և պիտի ապրիս. Յաղկերտներ, Յուսուփներ, Լանկթամուր ու Համիտներ կուգան կանցնին, պահ մը աւերակ, սրածութիւն, սով ու մահ սփռելով և դուն կը կոխես անոնց սեւ մսիր դարձած փոշիներու վրայ և Հայու Աստծուն փառք կուտաս և սեւ օբէն վերջ լոյս արեւ կը տեսնես։ «Օր մերձ է»։

ՍՊԱՎ, այո՛, մեր այս աւուր միակ մտածելիք սոճն է, որ արհաւիրք կոտորածներուն պիտի յաջորդէ անաբողջ. արդի բացարձակ անապահովութեան պատճառաւ ոչ մէկ երկրագործ չի պիտի համարձակի մշակութեան ձեռնարկել, որով և սոճն աւելի ընդհանուր, աւելի ահաւոր պիտի լինի քան 1879/81, երբ պատերազմի աւեր ու աւարէն վերջ կեդրոնական Հայաստանի վրայ եկաւ տիրեց իբրեւ բնական յաջորդ Ջելալէտինին, Թուրքայ և Ռուսայ բանակներու չարժամանց ու աւերմանց։ Այն Թուականէն այսօր չարիքը տասնապատկած է Թուրքը։

Հայոց Վեհափառ Հայրիկն, Ամեն. Իզմիրլեան պատրիարք Սրբազանն խորին ուշադրութիւն կը հրաւիրենք այս սեւ կէտի վրայ, զի ինչ որ Ձէյթի փաշաներ, Քիւրտեր պակաս Թողուցեր են, սովը պիտի լրացնէ. և Թէպէտ սովի ժամանակ Քիւրտն ու Թուրքն ալ հաւասարապէս պիտի պատժուին, բայց այդ գազաններ սուր ու հրացան ունին, կը յարձակին գիւղացիի վրայ, ինչ որ գտնեն, պարէն կամ անասուն, կառնեն կը տանին և անզէն անպաշտպան գիւղացին կը Թողուն սոխ ճիրան-ներուն տակ տուայտիլ ու մեռնիլ։

Օր առաջ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ պէտք է հաստատել Հայաստանի մէջ. այս պէտք է լինի մեր ամենից չանքը։ Եթէ մեր յոյս քօմիսիօնի վրայ դնենք, անգութ և անխելք Թուրքը դեռ ի՛նչ նորնոր օրօրներով պիտի օրօրէ զԵւրոպան, մինչեւ որ Հայուն ալ մահու քուն քաշել տայ։ «Տէյլի Թելէկրաֆ» (Dayly Telegraph) Մուշի արիւնահոս Թղթակցի ըսածին համեմատ՝ քօմիսիօնը երկու ամսէն տակաւին չէ կարող աւարտել իր պաշտօնը. պա՛տ տեղեկագրէն վերջ Թուրքայ պահեստի անապատ նորանոր պատրուակներ, օրինակի համար մեծամասնութեան խնդիր մը՝ որ 1878էն ի վեր ամեն անգամ երբ բարենորոգում գործադրելու ճիշտն պատեր է հասնիլէի կառավարութիւն, այդ մեծամասնութեան խնդիր բան դարձ չիներ է. այնուհետեւ քօմիսիոններ, անկից վերջ «Բարեկարգութիւնը ընդհանուր պիտի ընեմ» ըսելով ժամանակ անցուցեր է, տասնեօթ տարիներ զբաղեցուցած է Եւրոպան, միանգամայն բացարձակ լրբութեամբ ու անգթութեամբ Հայաստանը առանց Հայու Թողտալու դժոխային ամեն գազանի և յայտնի հնարքները գործադրած է։

Այժմէն պարտք կը համարինք յիշեցնել մեր գործողներուն և անոնց որ կը համակրին մեր արդար գաղափարին, Թէ առաջինն՝ մեծամասնութեան խընդիրը բնաւ կարեւորութիւն չունի և իրաւունք չի տար բռնաւորին որ հարստահարէ և կոտրէ փոքրամասնութիւնը։ Երկրորդ՝ Հայոց բացարձակ մեծամասնութիւն կայ Վանայ և Բաղէշի կուսակալութեանց մէջ. ամբողջ Վանայ կուսակալութեան մէջ միայն 26 հազար Թուրք կայ, 30-35 հազար քուրտ, ամենամեծ մաս վրանաբնակ, որ այսօր Վանայ նահանգապետ վրայ, վաղը Մուսուլի կողմեր, միւս օր ուրիշ տեղեր կը Թափառին, 140 հազար գուտ Հայ և 70 հազար Ասորի քրիստոնեաները Մարշմանի ժողովուրդ։ Նոյնպէս բա-

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Ես ալ հայրենիք մը ունիմ, որ ինձ կը սիրէ,
Ես ալ հայրենիք մը ունիմ, որ ինձ կը սիրէ,
Ուր ես ծնայ, ուր ես մեծցայ, ուր ես ապրեցայ

Երզնկայի մէջ, հիմա քսան և հինգ Հայեր ձերբակալուած են կասկածնե-րի պատճառով, խարբերդի մէջ աւելի շատ : Մուշի դաշտին մէջ ժանտարա-ւանները կամ զապթիէները կը հսկեն գիւղէ գիւղ տանող բոլոր ճամբանե-րին վրայ, գիւղացիներէն իրար հետ յարաբերութիւնը խզելու համար :

Մինչեւ փետրուարի 26ը, պա-տուիրակները Մուշէն մի երկրորդ թղթատար չէին խրկած : Իմ նա-խորդ հեռագիրս խրկելէս ի վեր, պատուիրակները զբաղեցան մի աղջ-կան բռնի առեւանգումի խնդրով, որ հետաքրքրական ելք ունեցաւ : Խնդիրն այս է. Պուլանըխի գաւառին Համպաշէխ գիւղին մէջ դորձով կըզ-բաղէր Սողոմոն անունով Բաղէշցի մի Հայ : Սա ունէր 17-18 տարեկան մի աղջիկ, մօտերս նշանուած : Մի քիւրդ Քաճո (?Khatsho գրուած) անունով, հետը Նատօ անուն մի ընկեր և բազ-մաթիւ զինուած հետեւորդներ առած, կէսօրին մտան Սողոմոնի տունը և բռնի առին տարին աղջիկը : Պէտք եղած բողոքը տրուեցաւ բայց հետե-ւանք չունեցաւ : Սողոմոն աղերսագիր տուաւ Եւրոպացի պատուիրակներին, ասնք ալ դիտողութիւն յայտնելին քննիչներին : Թիւրք պաշտօնեաները այնպէս համոզուած լինելով որ աղջի-կը պիտի ըսէ թէ իր կամքով գնացած է Թիւրքին, հրաման տուին աղջիկը Մուշ բերելու : Քօլի գայմագամը, ո-րին ուղղուած էր այդ հրաման, պա-տասխանեց թէ անկարող է առանց դէնքի ղօրութեան աղջիկը ձեռք բե-րելու, որովհետեւ Քիւրտերը չէին յանձներ զայն : Ասոր վրայ ղօրք խրկուեցաւ այդ քրդական գիւղը. բայց Քաճօ մերժեց աղջիկը յանձնել. ուստի կռիւ սկսաւ, Քաճօ և իր եղբայ-րը ղօրքերի ձեռքով սպաննուեցան և Նատօ որ աղջիկը առեւանգելու հա-մար Քաճոյին օգնած էր, բռնուեցաւ և Մուշ բերուեցաւ կը յուսային թէ աղջկան վկայութիւնը մահմետական-ներին նպաստաւոր պիտի լինէր. բայց ներին նպաստաւոր պիտի լինէր. բայց երբ յանձնաժողովին առջեւ ներկա-յացաւ աղջիկը, իր մօր ոտքը պլուս-լով մարեցաւ ընկաւ, յետոյ յայտա-րարեց թէ բռնի ղօրութեամբ տա-րուած էր :

Գրեթէ յիսուն Սասունցի աղջիկ-ներ դիտեմ որ այսպէս առեւանգուած և իրրեւ ստացուած են թիւրք պինուորներուն և ուրիշներուն : Ամենա-մեծ զգուշութիւն կը լինի որ այս ղո-հերի վիճակը և գտնուած տեղերը գաղտնի պահուին :

ՎԵՀԱՓՀԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նախորդ թուով հրատարակած ենք արդէն վեհ. Հայրապետի Բա-թումէն մեկնելը, եւրոպական լրա-գիրներուն եկած հեռագիրներէն առ-նելով : Այժմ Թիֆլիսի լրագիրներէն կը քաղենք հետեւեալ մանրամասնու-թիւնները :

Վեհափառ կաթողիկոսը մէկ շա-բաթի չափ ծանր է Բաթում, թէ՛ կառավարութեան և թէ՛ Բաթումա-բնակ Հայերի կողմէն ջերմ համակ-րութեան ցոյցեր վայելելով : Մի մեծ ճաշկերոյթ տրուեր է Նորին Վեհա-փառութեան փետր. 12/24ին, ուր քաղաքապետ Պր. Կալանդէր բա-ժակ առաջարկելով Ն. Վեհափառու-թեան կենաց, յայտնութիւն ժաղթեր է Նորա բոլոր ձեռնարկութիւններին և նպատակներին, կատարելապէս հա-մոզուած լինելով որ Ն. Ս. Օծութեան բոլոր իղձերն ու ցանկութիւնները ալ բարի կը լինին :

Վեհափառը փետր. 14/26ին ժամ 11ին մեկներ է Բաթումէն «Կոս-տանտին» շոգենաւով : Ժողովրդի ահա-գին բազմութիւն ծովեզերքը լըցը-նուած, «կեցցէ Հայրիկ» կաղաղակը և բարի ճանապարհ կը մաղթեր իր սիրելի կաթողիկոսի : Դժբաղդաբար նոյն օր օդը անձրեւային էր և ճանա-պարհին ալեկոծութիւն եղած է : Բայց ալեկոծութիւնը ոչ մի աղդեցութիւն չէ ունեցեր վեհափառին վրայ որ բո-լորովին առողջ վիճակի մէջ հասեր է Նովորոսիսկ փետր. 16/28ին ժամ 11ին : Ժողովուրդը մեծ բազմութեամբ լըց-ուած էր ծովեզերքը. քաղաքին կող-մէն մի պատուոյ ամաւորութիւն աղու հա-ցով դիմաւորեց Նորին Վեհափառու-թեան : Ժողովուրդը կեցցէների ան-վերջ աղաղակներով մինչեւ երկաթու-ղիի կայարանը ուղեկցեցաւ իրեն : Վեհափառը շոգեկառքի արտակարգ գնացքով՝ որ Եկատերինոդարի Հայե-րը պատրաստել տուած էին իրեն համար, նոյն օր երեկոյեան ժամ 5ին հասաւ Եկատերինոդար ուր նահան-գապետը իր օգնականով, քաղաքա-պետը և այլ բարձրաստիճան անձեր դիմաւորեցին Նորին Վեհափառու-թեան իր վակոնի մէջ և քաղաքին կողմէն Իրեն աղ ու հաց մատուցին մի արծաթեայ ափսէի վրայ որ յատ-կապէս Վեհ. կաթողիկոսի այցելու-թեան յիշատակին համար շինել տըր-ուած էր : Ողեւորուած ժողովրդի ջերմ համակրական ցոյցերովը և ան-վերջ կեցցէների աղաղակներով առաջ-նորդուեցաւ Վեհափառը դէպի եկե-ղեցին, ուր աղօթելէ յետոյ, հիւրընկալուեցաւ Թորոսեան եղբարց տունը որ այս առթիւ շքեղապէս զարդա-րուած էր : Նոյն օր Եկատերինոդարի մէջ բոլոր Հայերի խանութները փա-կուած էին :

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

Զմիռն, փետր. 18/2 մարտ 1895

Վարդանանց տօնի օրը տեղւոյս Ս. Առաքնորդն լինք անձամբ պատա-րագեց Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ երդեհոնով : Եթէ չեմ սխալիր, այս առաջին անգամն է որ Զմիռնի և-կեղեցիին մէջ կը լսուի երդեհոնի ձայնը :

Շուկայի Հայոց դրէթէ բոլոր խա-նութները գոց էին, երկսեռ բազմու-թեամբ լեցուած էր եկեղեցին. ինչպէս կըսեն, ասեղ ձգելու տեղ չիկար : Ս. Առաքնորդը կարճ և ազդու քարոզ մը խօսեցաւ, վարդանանց և Ղեւոնդեանց նպատակը բացատրեց ժողովրդին և յորդորեց վարդանանց օրինակին հե-տեւիլ : Ս. պատարագը աւարտելէն յետոյ, հոգեհանգիստ կատարուեցաւ հնոց և նորոց, յայտից և անյայտից համար : Ժողովուրդը ամբողջութեամբ ներկայ եր հոգեհանգստի ժամանակ : Եկեղեցին աւարտելէն վերջը ժողո-վուրդը ցրուեցաւ խոր տպաւորու-թեան տակ :

Ձերբակալութիւնները տեղս եր-բեմն կը պայթին հրաբուխի պէս և երբեմն կըմարին. այս օրեր դարձեալ վերսկսած են. ուր որ ալ ըլլայ, խեղճ գաւառացին է որ կը տուժէ. փոլիս-ները կը մտնեն պանդոկները կը խու-զարկեն գաւառացւոց սենեակները, մէկ քանի թուղթի կտոր կամ նա-մակներ կը հաւաքեն և կ'առաջնոր-դեն բանտ. այնտեղ մէկ քանի օր յա-նիրաւի պահելէն վերջ, մէկ քանի մեճիտ կառնեն և թող կուտան :

* * *

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Ամեն. Տ. Մատթէոս Պատրիարք Իզ-միրլեան, փետր. 18/2 մարտին, հանդի-սաւոր կերպով այցելութեան գնացեր է Ցոյների նորընծիր պատրիարք Ամեն. Տ. Անթիմոս Ի ին : Քառորդ ժամ չափ տեսակցելով, չնորհաւորեր է անոր նոր պաշտօն և փափաք յայտներ է որ երկու քոյր եկեղեցիներին մէջ բարեկամական ու եղբայրական միութիւնը միշտ անեղծ մնայ : Ամեն Տ. Անթիմոս պատրիարքն ալ փոխադարձապէս նոյն մտքով յայտա-րարութիւններ ըրեր է : Տ. Մատթէոս պատրիարք Ֆէների պատրիարքարանի Մայր-եկեղեցին հրաւիրուելով յոյն եկե-ղեցականներին և դպիրներուն առաջնորդու-թեամբը՝ որոնք իսկ բօյա՛ ի՛րի տի՛սբօթա (ի բազում ամս Տէր) չարականը կերգէին, հոն խորանին առջեւ աղօթեր և յետոյ պատրիարքական աթոռին վրայ հրաւի-րուելով՝ անկէ մի բանախօսութիւն արեր է հայերէն լեզուով և իրեն նիւթ ունե-նալով քրիստոնէական կրօնի յաղթանա-կը և յունական ու հայկական երկու քոյր եկեղեցիների սիրակցութիւնը : Հա-յադէտ Տիմիթրիոս Զօլաքիոէս Ն Փէնտին որ թարգմանի պաշտօն վարած էր երկու պատրիարքների տեսակցութեան միջոցին նոյն բանախօսութիւնն ալ յունարէնի թարգմաներ է որ շատ լաւ տպաւորու-թիւն ունեցեր է եկեղեցիին մէջ խըռ-նուած յոյն և հայ հետաքրքիր ժողո-վուրդին վրայ, որոնց համակրական ցոյցե-րին մէջէն դէպի իր կառք առաջնոր-դուելով Ամեն. Իզմիրլեան իր ուղեկիցնե-րի հետ վերադարձեր է Գումգափուի պատրիարքարանը :

— Պանտրմայի Տ. Ոսկի քահանայն որ ասկէ առաջ կուսակցական մի վէճի պատճառով 50-60 լուսաւորչական ըն-տանիքի հետ մէկտեղ գնացած հռով-մէական եկեղեցիին յարած էր. այժմ Ա-մեն. Իզմիրլեան պատրիարքին մի խնդրա-գիր տալով վերադարձեր է իր մայրենի եկեղեցիի գիրկը. Իրեն հետ վերադար-ձեր են նաեւ յիշեալ ընտանիքները ո-րոնցմէ 5-6ը միայն յարած մնացեր են հռովմէական եկեղեցիին մէջ :

— Պատրիարքարանի մարդահամարի ճիւղին տեսուչ Տիար Ղազար Հովսեան՝ որ ազգային այլ և այլ պաշտօններ ալ վարած է արդիւնաւոր կերպով, մի քանի օր միայն հիւանդ պարկեշտ յետոյ մեռեր է փետր. 20/4 մարտին: Հանդուցեալը 56 տարեկան էր :

ՁՕՐԱՊԵՏ Տ. ԱՍԱՏՈՒՐՈՎ

Պետերբուրգի լրագիրները կը հրատարակեն թէ հայազգի տեղակալ-զօրապետ անուանի Տէր-Ասատուրով որ աւստրիական սահմանագլուխը գտնուող բանակին մէջ կը պաշտօնա-վարէ այժմ, նշանակուած է կովկա-սեան զօրաբանակի հրամանատարու-թեան մէջ պաշտօնավարելու :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Սերպիա Ալեքսանդր թագաւորը վա-ղը Պիարիցէն կը մեկնի Սերպիա վերա-դառնալու համար :

— Լոնտոնի մէջ մի լուր տարածուեր է թէ նախարարապետ Լորտ Ռոզպէրի հրաժարական պիտի տայ. բայց չատ հիւա-նեաւոր չերեւիր այդ լուր :

— Պէրլինէն տրուած մի հեռագրի նայելով, Բոյխատակի մէջ գտնուած կու-սակցութիւնների պաշտօնական մէկ նոր ցուցակին համեմատ, այդ ժողովի մէջ Ալմանիացի պահպանողականներն ունին 59 երեսփոխան, կայսրութեան կուսակ-ցութիւնն ունի 27 երեսփոխան, հակասե-մական կուսակցութիւնը 11, կաթոլիկ կեդրոնը 99, Բոլոնիացիները 19, ազա-տական ազգայինները 51, յառաջդիմա-կան երկու կուսակցութիւնները 36, Հա-բսբուրի ռամկավարական կուսակցութիւնը 11, ընկերվարականները 45 և 28 երես-փոխան ալ կայ որ ոչ մի կուսակցութեան չեն պատկաներ : 10 երեսփոխանական աթոռ ալ պարապ մնացած են :

— Սպանիական կառավարութիւնը զօրքեր կը ղրկէ Ամերիկայի մէջ գտնուող Քուպա կղզին որի բնակիչները ապստամ-բած են : Քուպացիները մի քանի անգամ է որ ապստամբած են Սպանիայի դէմ իրենց անկախութիւն ձեռք բերելու փա-փաքով և ամեն անգամին ալ սպանիա-կան կառավարութիւնը սոսկալի կոտո-րածներով ճնշած է զիրենք բայց չէ կըր-ցած վերացնել իրենց մէջ անկախու-թեան զգացումը, այնպէս որ երբ բաւա-կան ոյժ կզգան իրենց մէջ, նորէն և նորէն կապստամբին ինչպէս որ այժմ :

— Ռուսիոյ Ձարի մեծ հօրեղբօրորդին՝ Ալեքսի Միխայլովիչ մեծ դքսին՝ որի մահը խմացուցինք նախորդ թուով, մարմինը Սան Բէմօէն (Իտալիա) ճանբայ հանուեր է մարտ 7ին դէպի Պետերբուրգ ուր հասեր է 11ին :

— Ամէնքէն կը հեռագրեն մարտ 11ին թէ ռուսական «Ձարէվնա» շոգենա-ւը որին մէջ կը գտնուէր Սթէնքի ռուս դեսպան Տ. Օնու, Բաթրատի ծոցին մէջ Տրէբանօի առջեւ խորտ է : Երկու շոգե-նաւներ ղրկուեր են զայն ջրին երեսը հա-նելու համար :

— Յունաստանի թագուհին, գահա-ժառանգ իշխանը և իշխանուհին Ջօրջիա գնացեր են Ձարեւիչին գիմաւորելու հա-մար որ մի քիչ ժամանակ Ջօրջիա անցու-նելէ յետոյ, Ալժէր պիտի երթայ, իր հի-ւանդութեան համար այդ կլիմայն օգ-տակար լինելով :

— Թէեւ լուր կար թէ Լոնտոնի ռուս-ական դեսպան Պարոն տը Սթալ պիտի նշանակուի Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնին, բայց Պե-տերբուրգի խիստ կլիմայն Տիկին տը Սթալին չյարմարելուն համար, նա հրա-ժարեցաւ և Ձարը այդ պաշտօն յանձնեց Վիէննայի դեսպան Լոպանով Րոստովսքի իշխանին որ Պետերբուրգ գնացած է այժմ : Իշխան Լոպանով Կ. պօլսի ալ դես-պան եղած է երբեմն :

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով ստորեւ հաշուուած է և ղրկելու ֆոստի ծախքը։

Որ Է֊քը կանխիկ կ՚վճարուած՝ գիրք չ՚ղրկուիր։

Խօսք վասն Հայրենասիրութեան 8 տպագրութիւն 60 *սնթմ.*

Հ. Բարսեղ Սարգիսեան, Ուսուց անասլրութիւն Մանիքեա Պաւղիկեան Թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացու Թուղթը (կրօնական նորելուկ գաղափարների տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդի մէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումների մի առանձին ուսումնասիրութիւն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան դասագիրքերին մէջ)։

2 *ֆր. 20 սնթմ.։*

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ դիւզացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական դործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, թխատ հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւնները կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեան առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը դրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ նիթէ ընթերցողներէ հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի պիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 *ֆրանկ և* 40 *սանթիմ։*

Տարածելու համար մեծ քանակու-

թեամբ առնողներին 25 % *զեղչ կը լինի։*

(Պարսկաստանի Հայերին համար 1 *ֆրանգ է։)*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 թուականի Հայ աղդին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միածալ դերքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմետր, տպուած 70 × 45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէկ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 բրլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 րբլ. ռպկ. կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան է սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794-1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գին՝ ճանապարհածախսով՝ բրլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոգրեալ պատկերն ու դերքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով գրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ինչ փափաքներ պէտք է ունենայ և ինչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամէն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անդամէն 50 օրինակ ծախու առնողին կ՚ընկերի ֆրանկով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մեկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիրը) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած դիրքերին վրայ ժամանակ զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փոկագծի մէջ նշանակուած գիներուն չափ։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԷՋ (*Սպառած*)։

Բ. ՀԱՑ ԳՈՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՑԵԼԻ »

Դ. ԱԶԱՑՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ՆԵՆՕԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՇՏԱՐԱԿՈՑՆԵՐՈՒ (*Սպառած*)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան տխուր հետեւանքների աչքի փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գինն (90 *սնթմ.*) 1 *ֆրանգ* 20 *սնթմ.*

Զ. ԳԱՄԱՒ ՔԱՔԻԳ — ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ (*Մեծանուն Հայ բանաստեղծին վերջերս դրած ազատաշունչ քնարը ոտանաւորներէն* 3*ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 *հատը* 2 *ֆր. և* 50 *սանթիմ, հատը* (5 *սնթմ.*) 10 *սանթիմ։*

Է. ԼԻՆՋԻ ՕՐԻՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ (*Սպառած*)

Ը. ՓԻՒՐՓԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղագրական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ դուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գինն 50 *սանթիմ* (35 *սանթիմ*)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱՅԻ ՅՈՒՇԱՐԱՐ (*Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը ամէն բոլորովին սպառած և մեւնոյն ժամանակ չատերն հետաքրքրութեան առարկայ*

դարձած լինելով, այդ շրջանին մէջ Մ Փորթուգալեանի դրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30*ի չափ ամփոփուած են Ցուցարարի մէջ որ ամէն ածալ դիրքով* 124 *երեսներէ կը բազկանայ*)։ (1 *ֆրանգ*)։ 1 *ֆր.* 40 *սանթիմ*

Ժ. ՎՐԷԺ (*Պուլկարիոյ մէջ Թիւրքերի ապահ բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ինչպիսի մեջողներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար*)։ (15 *սնթիմ*) 20 *սնթմ.*

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (*Ցուխաստանի մէջ Թիւրքերի սրած բարբարոսութիւն. ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ինչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար*), (0,15*սանթիմ*) 20 *սանթիմ*։

ԺՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆԱՄԱԿՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ԴՐԱԾ ՕՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի դրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ գանազան քաղաքներէ մէջ և գանազան տպաւորութիւններէ տակ իւրաքանչիւրին դրած ոտանաւորներուն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Ան մի քանի ոտանաւորներ որոնք իրենց նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս լոյս տպագրուած ազգային երկասիրներէ մէջ՝ որոց վերջինին տպագրութիւնն վաղուց արգէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ինչ տպաւորութիւններէ տակ ներշնչուելով դրուած են։ Գին (10 *սանթիմ*) 15 *սանթիմ։*

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՄՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԻՆ Ա ԻՆՈՒԱՑ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԱԶԱՒՈՒԹԻՒ

Այս հետաքրքրաշարժ դրուած կը ներկայացունէ ընտանեկան սխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ է վերջոյ ինք ալ իւր որդուս ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գինն 1 *ֆրանգ*, (75 *սանթիմ*)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE

ՄԱՐՍԷՑԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.